

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Լիլիթ Գալստյանի, Վահան Հովհաննիսյանի, Արծվիկ Մինասյանի, Արա Նռանյանի, Ռուզաննա Առաքելյանի և Արտյուշ Շահբազյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Առաջարկում ենք սահմանել դրույթներ ներկայացված նախագծի պահանջների խախտման իրավական հետևանքների մասին, քանի որ դրանց համար պատասխանատվություն սահմանված չէ ոչ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ոչ որևէ այլ ակտով: Մինչդեռ, համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ

մասի, նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն:

2. Օրենքի նախագիծը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով առաջարկում ենք՝

1) նախագծի վերնագրում «ԼՐԱՅՈՒՄՆԵՐ» բառը փոխարինել «ԼՐԱՅՈՒՄ» բառով.

2) նախագծի 1-ին հոդվածում՝

ա.«ավելացնել» բառը փոխարինել «լրացնել» բառով,

բ. հստակեցնել նույն հոդվածում «ձեռնարկի բովանդակության» բառերի իրավական բովանդակությունը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-758-09.11.2009-ԳԿ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ
կատարելու մասին**

Հոդված 1. «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածում ավելացնել նոր՝ 14-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

Մշակութային ծառայություններ իրականացնող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը՝ թատերահամերգային, մասսայական միջոցառումների, փառատոների, համերգային հյուրախաղերի գովազդում, զանգվածային տեղեկատվության բոլոր՝ էլեկտրոնային, տպագիր կամ արտաքին գովազդի միջոցներում պարտադիր տեղեկություններ պետք է նշեն գովազդատուի, ձեռնարկի բովանդակության, վայրի, ժամանակի, համերգային կատարումների ձայնային առանձնահատկությունների (կենդանի կատարում կամ ձայնագրություն (ֆոնոգրամա)) մասին:

Կենդանի կատարման կամ ձայնագրության մասին տեղեկությանը չպետք է լինի գովազդի ողջ ծավալի, տարածքի կամ բովանդակության 7% -ից պակաս:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՕՐԻՆԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 1996թ.: Այն կարգավորում է ՀՀ-ում գովազդի ստեղծման եւ տարածման իրավական հիմքերը, անհրաժեշտ պայմաններ է ապահովում հասարակության, գովազդ սպառողների եւ արտադրողների իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար:

Օրենքը սահմանում է նաեւ գովազդի նկատմամբ ընդհանուր պահանջները՝ հստակեցնելով ապրանքների առանձին տեսակների՝ ակոհոլային խմիչքների, ծխախոտի, դեղամիջոցների, մանկական սննդի, բուժտեխնիկայի, զենքի եւ զինամթերքի, վիճակախաղի գովազդի առանձնահատկությունները:

Այսօր գովազդի շուկայում՝ զանգվածային տեղեկատվության տպագիր, էլեկտրոնային, ինչպես նաեւ արտաքին գովազդի միջոցներում բավական մեծ ծավալներ են կազմում մշակութային ծառայությունների՝ թատերահամերգային, մասսայական միջոցառումների, փառատոների, համերգային հյուրախաղերի գովազդները: Մակայն միշտ չէ, որ մշակութային ոլորտի գովազդատուներն ու գովազդ արտադրողները բարեխիղճ են իրենց պարտականությունների մեջ: Հաճախ հավաստի կամ անհրաժեշտ տեղեկություններ չեն ներկայացվում մշակութային ծառայության իրական բովանդակության, վայրի, ժամանակի, համերգային կատարումների ձայնային առանձնահատկությունների մասին:

Պետական համերգասրահներում եւ թատերական դահլիճներում քիչ չեն ոչ կենդանի կատարմամբ համերգները եւ այդ մասին գովազդի մեջ համապատասխան հղման բացակայությունը:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքում ապրանքների առանձին տեսակների շարքում մշակութային գովազդի ընդհանուր պահանջների ու առանձնահատկությունների ամրագրումը բավարար իրավական մեխանիզմներ կապահովի մշակութային գովազդի պատշաճության եւ գովազդ սպառողների շահերի պաշտպանության համար:

Օրենսդրական նախաձեռնությունը մշակելիս նկատի ենք ունեցել միջազգային իրավական փորձը: